ԱՐԱՄԱՅԻՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Կյանքից հեռացավ Հայկական ՍՍՀ ԳԱ սոցիալիստական ազգերի զարգացման և մերձեցման պրոբլեմների գիտական խորհրդի նախագահ, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Արամայիս Նավասարդի Մնացականյանը։

Ա. Մնացականյանը ծնվել է 1911 թ. Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում, որտեղ և ստացել է նախնական կրթությունը։ Սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել ՀԿԿ Կենտկոմին առընթեր կոմունիստական համալսարանը, ապա Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության .ֆակուլտետը։ Երկար տարիներ աշխատել է իբրև ժուռնալիստ, տարբեր ժամանակներում խմբագրել մի շարք շրջանային թերթեր, եղել է «Ավանգարդ» թերթի խմբագիր, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին նա մեկնել է բանակ, խմբագրել «Մարտական գրոհ» և «ԲԳՆԲ մարտիկ» ռազմաճակատային թերթերը, պարգևատրվել Կարմիր աստղի շքանշանով և մեդալներով։

Ա. Մնացականյանը 1946 թ. զորացրվել է բանակից և անցել կուսակցական ղեկավար աշխատանքի։ Եղել է ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար, ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, ՀԿԿ Երևանի օկրուգային կոմիտեի առաջին քարտուղար։ Նա ՀԿԿ Կենտկոմի անդամ է եղել, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ։ 1953 թվականից նվիրվել է գիտական գործունեության և իր բեղմնավոր գրիչը ծառայեցրել ժողովրդի պատմության, հեղափոխական և կոմունիստական շարժումների պատմության լուսաբանման, մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդման գործին։

Նրա գրչին են պատկանում 32 մենագրություն, ավելի քան 200 գիտական, գիտապրոպագանդիստական հոդված։ Նա իբրև ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտոր, մեծ վաստակ ունի մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների հայերեն հրատարակությունների, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության առաջին ուրվագծերի ստեղծման գործում։ 1953 թվականից մինչև իր կյանքի վերջը աշխատել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում, եղել է նախագահության քարտուղար, պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի պատմության բաժնի վարիչ, իսկ հետո սոցիալիստական ազգերի զարգացման ու մերձեցման պրոբլեմների գիտակ.ան խորհրդի նախագահ։

Ա. Մնացականյանը կուսակցական, հասարակական ակտիվ աշխատող էր, նա ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության նախագահի տեղակալն էր, բազմաթիվ գիտական խորհուրդների անդամ։

Կուսակցության հավատարիմ զավակ, ազնիվ քաղաքացի, բազմաբեղուն գիտնական Ա. Մնացականյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում։

ԴԱԼԼԱՔՅԱՆ Կ. Լ., ՆԵՐՍԻՍՅԱՆ Լ. Ն., ԽՈՋԱՄԻՐՅԱՆ Յու. Ե., ԱՅԱՏՐՅԱՆ Գ. Ե., ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա. Պ.. ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա. Հ., ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ. Հ., ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա., ՍԻՄՈՆՅԱՆ Հ. Ռ., ԻՍԱՆՆԻՍՅԱՆ Ա. Ռ., ԳԱԼՈՅԱՆ Գ. Ա., ՔԱԼԱՇՅԱՆ Լ. Խ., ԱՌԱՔԵԼՅԱՆ Բ. Ն., ԲՐՈՒՏՅԱՆ Գ. Ա., ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. Ա.